

բով։ Վերջապէս ճարմանդը որ զրահաձևէ, հիանալի արուեստական նրբութիւն մ'ունի, և այս ալ նոյնպէս կարկեհաններով կը փայլի։ Եւ այս ամենքաներն պղնձէ ոսկէզօծեալ արկղի մը մէջ դրուած են, որ զարդարուած է միւսիոնական նկարներով. (տես երես 94)։

Աւելորդ կը համարիմք ըսելն որ այս ընծայն մեծ ընդունելութիւն գտաւ 'ի Պեռլին։ Միայն կ'ուզեմք յիշեցնել որ այս ընծայով Ումակէրդո նորութիւն մը մըտուց գերմանական սովորութեան մէջ. վասն զի 'ի Գերմանիա սովորութիւն է որ կնքահայրը տղուն՝ ոչ թէ մօրը ընծայ կ'ընէ։

—

ԵՌԱՄՍԵԱՅ ՕՐԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԵԼԻ ՊԱՏԱՀԱՐԱՅ

ՅՈՒՆՈՒՅՐ 1. — Իտալիոյ թագաւորը տարեգլխի շքեղ ընդունելութիւնը կ'ընէ, և Երեսփոխանաց ժողովը ներկայացնողաց՝ որ Խորհուրդ կու տան խնայել անձին՝ կը պատասխանէ թէ իր անձը փոյթ չէ, երբ Իտալիոյ միութիւնն ու աղատութիւնը ապահովեալ են։

— 2. — Ուօն զօրավարը սպարապետ (մարաֆախտ) կ'ընտրուի։

— 3. — Գուլիէլմոս կայսրը կ'ընծայէ Պիզմարքի ականակուռ սև արծուէնշանը։ — Պետութիւնք եռանդեամբ յորդոր կ'ըլլան Յունաստանի որ Լաւրիոնի՝ ինդրոյն համար օտարազգի դատաւորութիւնն ընդունի։

— 4. — Նարոլէոն Գի փամփշտադարման քարահատութեան փորձն 'ի գործ կը զրուի։

1. Լաւրիոնի խնդիրն՝ փռանկ-իտալական վաճառականական ընկերութեան մը Յունաց տէրութենէն հատանութիւն ընդունած ըլլալով, դաշնագրութեամբ հանդերձ՝ Մոռէայի մէջ և զած Լաւրիոն երկրին մետաղահանքին մէկ մասը (որոյ գլխաւոր հանքն է արծաթաքեր կատար) բանեցընել 'ի շահ իրեն, և քանի մը տարիէն Յունաց տէրութիւնը ձեռնարկութեան մեծապէս շահաբեր ըլլալը տեսնելով և ուզած ըլլալով դաշնագրութիւնը ջրել, ընկերութեան առ իրենց գեռապանները դիմելն և օտարազգի դատաստանաւինդրութեան արդարացի լուծումը պահանջելն է։

— 5. — Համալսարանի վիճայէն 'ի Բուրցը փոխադրուելու լուրը սուտ կ'ելլէ։

— 6. — Նաւարրայի գնդից և Պասդեան նահանգաց հրամանատարութիւնը Մորիոնէս զօրավարին կը յանձնուի։

— 7. — Սերվիոյ զինուիլը կը լսուի։ — Յոյն նոր պաշտօնակալաց դատը կ'ամբողջանայ։

— 8. — Անցագիրք ընդ մէջ Գաղղիոյ և Բրուսիոյ կը վերցուին։ — Շուվալովի Լոնտրա կը հասնի։

— 9. — Նարոլէոն Գ. կը մեռնի 'ի Զիզլհրասդ։

— 10. — Փրանկիսկոս Տալ-Յնկարոյ իտալացի բանաստեղծը կը մեռնի 'ի Նարում։

— 11. — Անդղիացի օրագիրք լիուլի կը գովեն զմեռեալ կայսրը։ — Վիէննացի արքունիք տասնուերկու օրուան համար սուգ կը մտնէ. Բրիտանիական արքունիքն տասն օրուան համար։

— 12. — Թիէր դարձեալ կ'ապահովէ զոգիս՝ հասարակապետութեան պահպանութեան նկատմամբ։ — Ի Մատրիտ մեծ ցոյց և շարժումն կ'ըլլայ բառնակու համար դգերութիւնն 'ի գաղթականութեանց։


— 13. — 1875ի համար ոուս հաշուէկիփոն ընդունելի կ'ըլլայ, յորմէ կ'երեխթէ մուտք առաւելագոյն են քան զելս։ — Ի Ուուշճուգ Յունաց և Պուլկարաց իրարուհետ զարնուիլը։ — Սպանիոյ թագտուրը զԱբրանոյ կանչել կու տայ։

— 14. — Ոիքողդի պաշտօնեայն զիփուլա Քագէլլի զօրավարը կը դրկէ պայլատականօք հանդերձ 'ի Զիզլհրասդ, Նարոլէոն Գ. յուղարկաւորութեան հանդիսակից ըլլալու։

— 15. — Ի Հոռվլմ, 'ի Միլան և 'ի Պուրեշը փառաւոր հանգստեան պաշտօնք կը կատարուին Նարոլէոն Գ. համար։ — Պէլքասդը կը բողոքէ առ Երեսփոխանաց ժողովի Վէրսայլի՝ Պուրկուէնի հրաժարելուն համար։

— 16. — Համալորի կոմիին և Յուլէանեանց միութիւնը ապահով կատարուած կը համարուի։ — Սպանիոյ ծովային պաշտօնակալաց օրինադրութիւն կ'առաջարկէ ծովային զինուորազրութիւնը եղծանելու համար։

— 17. — Բրուսիական խորհրդարանին նախագահը կը ջատագովէ Յանձնամաժողովոյն մտածութիւնը թէ՝ Հոռվլմէադաւան բարձրաստիճան եկեղեցականիք պարտաւորեալ ըլլալով հնազանդիլ Հոռվլմայ քահանայալետին՝ չանսատելու են ընդդժմէ տէրութեան օրինաց։



— 18. — Կարոլոսեանք Սպանիոյ հիւսային կողմն իրենց աւերածը կը շարունակեն : — Քատոռնա պաշտօնակալը կ'իմացնէ 'ի Լոնտրայէ առ Պետութիւնն իտալական՝ Եւգինէ անկեալ կայսրուհւոյն զինքն ընդունիլն և չնորհակալ ըլլալը իտալացւոց սիրոյ ցոյցերուն համար :

— 19. — Ի Մոսքուա ոստիկանութիւնը սուտ դրամակատից խումբ մը կը բռնէ : — Շուվալոֆ Լոնտրայէն ճամբայ կ'ելլէ : — Կարոլոսեանք Հեռնանի շոգեկառաց կայարանը կ'այրեն :

— 20. — Անդղիական հեռագրաւ կ'իմացուի Լաւրիոնի խնդրոյն բարեյարմարիլը : — Շուետի նոր թագաւորը Ատենանը կը բանայ :

— 21. — Օոլէանեան իշխանք հանդիսակից կ'ըլլան հոգեհանդիստ պատարագի Լուղովիկոս ժջէ : — Թիէր՝ Նիկրայի հետ կը բանախօսի իտալիոյ հետ վաճառականութեան դաշնադրութեան վրայ : — Կը մեռնի 'ի Ռուսիա մեծ գքսուհին Հելենա Բաւլովնա, ծնեալ իշխանուհի Վիրդէմպէրկի :

— 22. — Հասարակորդքն Ֆրնույեոյ, Տըքան և Պընոյ հրացան հարուածովք կը սպաննուին :

— 23. — Կը ծանուցուի թէ յոյն դրամատեարց առաջարկութիւնը Լաւրիոնի նըկատմամբ, վարձատրելով Ռու և Աէրբիէրի ընկերութիւնը, յաջողելու մօտ է :

— 24. — Բրուսիական պաշտօնակալին անուանիլն յիտալիա կ'ուշացուի :

— 25. — Գաղղիա և իտալիա կ'ընդունին Աւստրիոյ իշխանակամ դատաւորութիւնը Լաւրիոնի խնդրոյն նկատմամբ : — Պիզմարք երեսփոխանաց դահլըմին մէջ կ'իմացնէ թէ կայսրութեան քարտուղարը պէտք է միշտ Բրուսիացի ըլլայ :

— 26. — Պրադիլի այրի կայսրուհին կը մեռնի : — Ապտիւ Ռահման Ռուսիոյ գըրգըռմամբ կը յարձակի և կ'առնու Հիսուսր ամրոցը և զբերդապետը Ռուսաց կը յանձնէ :

— 27. — Կոնդալէս կը ջախջախէ Սանդաքրուգ աւագերիցու խառնամբոխը :

— 28. — Մոնդէնէկրոյի իշխանին նորածին դստեր մկրտութեան ժամանակ ռուս հիւսատը ներկայացուցիչ կ'ըլլայ Զարին : — Պոկիծիչ ռուս ուսումնագէտը Աէդդին կը հասնի, Մոնդէնէկրոյի դատաստանագրին խմբագրութեանը աշխատակից ըլլալու :

— 29. — Բ. Դուռը մէկ միլիոն ու կէս միրէ սդեռլինի առժամանակեայ փոխառութիւն կը դաշնադրէ :

— 30. — Պազիլէայի եափկոսպոսը վարկը ձգուի յիշխանութենէ, քազաքային իշխանութիւնքը ճանչնալ չուզելուն համար :

— 31. — Մատրիտի արքունական պալատին մէջ Զքեզ Աստուած գռհաբանեմք կ'երգըցուի նոր արքայորդւոյ ծննդեանն համար : — Կը ծանուցուի թէ վերջին նոր քննութեան համեմատ 'ի Քուպա դեռ 269,000 գերիք կան : — Կրօնից պաշտօնակալն 'ի Պեռլին կարեւոր կը ցուցընէ Տէրութեան իրաւունքը ճշդիւ հաստատելը եափսկոսաց նկատմամբ :

ՓԵՏՐՈՒԱՐ 1. — Վիկտոր Բիզանի Վենետիկոյ նաւարանին մէջ շինուած իտալական բորժեղան 'ի Ախտնէյ կը հասնի, հանդիպելէն ետքը յԱմպոյնա՝ 'ի Մոլուքեանս, գտնելով հոն զՊէրքարի և զՃէ Ալպէրդիս, և այս երկրորդս իր մէջն ընդունելով :

— 2. — Սպանիոյ արքայորդին Լուգուիկ Ամէտէոյ անուամբ կը մկրտուի :

— 3. — Վէրսայլի ժողովարանին կ'առաջարկուի Լիոնի Շինատեսչութիւնը (Municipio) Բարիզու նման կանոնաւորել :

— 4. — Ռէմիւզա՝ Անդղիա — Գաղղիական վաճառականութիւնը հաստատապէս վաւերացնելու խորհուրդը կ'առաջարկէ : — Միաբանեալ — Նահանգաց երեսփոխանաց ժողովոյն մէջ հնարք կը մտածուի 'ի Քուպա խաղաղութիւն հաստատելու համար :

— 5. — Սանտուիչ կղզեաց ժողովքը զԼունալիրոյ իշխանը թագաւոր կ'անուանակոչէ, որ թագաւորական ճառախօսութեանը մէջ բարեկամական դգացմունք կ'արտայայտէ առ ամենայն ազինս : — Ռուսիոյ մեծ դուքսն Նիկոլայոս կը մեկնի երթալ 'ի Նիցցա :

— 6. — Անդղիական խորհրդարանին մէջ թագուհւոյն ժողովքը բանալու ճառը կը կարդացուի :

— 7. — Տիգրաէլի 'ի ժողովարանի դէմկը խօսի Անդղիայի տէրութեան բռնած ոճոյն Այտապամայի խնդրոյն մէջ : — Ի Բէգէրսպուրկ Պարսից Շահն ընդունելու պատրաստութիւնք կ'ըլլուին :

— 8. — Զուիցցերիի տէրութեան խորհրդարանը շինեւռայի մարզին ամենայն ժողովրդապետաց եռամսեայ թոշակը կը կըտրէ իբր 'ի պատիժ, արգելման հակառակ յամպիոնէ պապական կոնդակներ կարդալնուն համար :

— 9. — Ի Վիէննա կը մեռնի Քարոլինա Ակուսդա կայսրուհին : — Մատրիտի լրագիրը հրանօթաձիգ զինուորութիւնը կանոնաւորող հրովարտակ մը կը հրատարակէ :

— 10. — Ամէտէոյ թագաւորը Սպա-

նիոյ գահէն հրաժարիլ կ'որոշէ իւր ամենայն սերնդօքը: — Տիեզերք (Univers) լրագիրը Նաբոլէոնի վերջին պաշտօնակալներէն մէկուն համառօտագրութիւնը կը հրատարակէ, յորմէ կ'իմացուի թէ 1870ին յուլիսէն առաջ Աւստրիա կ'ուզէր որ Հռովմիտալացւոց յանձնուի, որուն հակառակ կեցաւ կայսերական պետութիւնը: — Բէրուի վարչութեան պալատին կրակ տրուիլը և Բարտոյ նախագահին սպաննուիլը կը լսուի:

— 11. — Սպանիոյ թագաւորը գահէն կը հրաժարի: — Հասարակապետութեան հրատարակումն:

— 12. — Սպանիական խորհրդարանը մեծարանաց յայտարարագիր մը կը քուէարկէ առ հրաժարեալ թագաւորն Ամետէոյ: — Ամետէոյ կ'ելլէ Մատրիտէն: — Միաբանեալ-նահանդք Ամերիկոյ Սպանիական հասարակապետութիւնը կը ճանչնան:

— 13. — Սպանիոյ պաշտօնակալն 'ի Պեոլին կը բանակցի Պիզմարքի հետ: — Սպանիական հրովարտակ մը կը բառնայ ազնուականութեան ամենայն պատուանուններն ու պատուանշաններ:

— 14. — Նուվիլաս Մատրիտի ընդհանուր սպարապետ կ'ընտրուի: — Հրաժարեալ թագաւորն Ամետէոյ Լիզապոնա կը հասնի:

— 17. — Բարիղու կոմսը չուզեր այցելու ըլլալ Շամալորի կոմսին: — Քասդէլարի շրջաբերականը կը զրկուի տէրութեանց քով եղող ներկայացուցչաց: — Քասդէլար Գաղղիոյ պաշտօնակալին այցելութեան կ'երթայ: — Ուրախաւէտ լուրեր կը հասնի 'ի Քուպայէ:

— 18. — Թիէր՝ Պրոյլեի հետ կը բանակցի:

— 19. — Դատաստանարանը զՆաբոլէոն իշխանը կը դատապարտէ Լըֆրանի հետ ունեցած խնդրոյն համար դատաստանին ծախքը վճարելու: — Ֆիկուէրաս կը ծանուցանէ թէ խորհրդարանի որոշողութիւնքն առժամանակեայ (transitorio) են և ոչ սահմանադրիչ (constitente):

— 20. — Վիկորիա թագուհին յայց կ'ելլէ Եւգինէ գահազուրկ կայսրուհոյն: — Թիէր օրինաւոր կը ծանուցանէ սպանիական հասարակապետութեան կազմութիւնը:

— 21. — Պառակտումն ընդ մէջ գաղղիական աջակողմ օրինաւորականաց և աջակեդրոն օոլէանեանց: — Թիէր զԱռնիմ և զՅուղակա կ'ընդունի: — Պրոյլեի տեղեկագիրը շատ գովեստիւք կը խօսի Թիէրի վրայ:

— 22. — Տժգութեան ցոյցեր 'ի Պարչէլլոնա սիրելի գօրագնդի մը քաղքէն մեկնելուն համար: — Կարոլոսեանք դէպ 'ի Վիկորիա տանող Երկաթուղին կ'աւերեն:

— 23. — Երկու մաղճախտի դէպք կը յայտնուին 'ի Բրակա: — Ի Բորգոյ-Ռիքրոյ ընդդէմ Սպանիոյ վտարանջութեան ճշումը կը ծանուցուի:

— 24. — Մորիոնէս ընդհանուր սպարապետ Մատրիտի կ'ընտրուի: — Սպանիական վարչութիւնը կը կազմուի ազգային խորհրդարանական համաժողովով և կը յանձնուի Ֆիկուէրասի, Քասդէլարի, Սալմէրոնի, Աքուգայի, Մարկալի, Դուգանի, Օրէիրոյի, Քաոյի, Սոունիի:

— 25. — Զուիցցերիի ազգային ուղղափառք ժողովարանի մէջ կը բողոքեն ընդդէմ Ֆէոնէի արտացուցին (dimostrazione): — Կը սկըսին պայմանադրութիւնք թղթատարական դաշին ընդ մէջ իտալիոյ և Յունաստանի:

— 26. — Զուիցցերիի կը ճանչնայ սպանիական հասարակապետութիւնը: — Ռումինեան Ալտեանն (Camera) կը հաւանի 'ի Հռովմ տէրութեան գործոց վերաբերեալ հաստատուն տեղ մը ու վարիչ հաստատելու, և կը մերժէ 'ի Վոշինկուլը ալ նոյնպիսի տեղ մը ունենալու առաջարկութիւնը:

— 27. Սէրրանոյ կը խոստանայ նեցուկըլլալ սպանիական հասարակապետութեան: — Լաւրիոնի խնդիրը կը վերջանայ Սէրրիէրիի ամենայն իրաւունքը ծախելովը:

— 28. — Ի Տըպին կը վերջանայ ուղղափառ եկեղեցականաց համախմբութիւնը: — Կամպէդդա ազգային խորհրդարանին մէջ ներհակարան ճառ մը կը խօսի:

ՄԱՐՏ 1. — Սգրազպուրի աստուածաբանութեան վարժոցին ուսուցչապետը Ալսասէն և Լորէնէն կ'արտաքսուի: — Տիեզական ճառախօսութիւն Տիւֆոր պաշտօնակալին Վէրսայլի խորհրդարանին մէջ: — Ֆիկուէրաս 10 միլիոն սպարտք կը խնդրէ կարոլոսեանց դէմ դնելու համար:

— 2. — Քասդէլար կ'առաջարկէ Զուիցցերիի մէջ սպանիական դեսպանութիւնը (legazione) վերստին հաստատել:

— 3. — Կ'աւարտի Բոր-Ռուայալի Երկաթուղին որով կը միակցի Աղլանտեան ծովը Միսիսիրիի հետ:

— 4. — Սպանիական Սահմանադրիչ ժողովը պիտի համախմբի մայիսի 1ին:

— 5. — Ըստ Բարիզ լրագրին 700 զինուորաց զօրագունդ մը, ընդ որում կալիֆէ զօրապետը և Շարտրի դուքսը 'ի 10,000 Արաբացւոց կը պաշարուի 'ի հարաւոյ Ալճերիի: — այս լուրս սուտ կը համա-

րուի այլ երկրայական ոճով : — Կրանդ նախագահն՝ ի բացումն խորհրդարանին ատենախօսութեամբ հասարակավետութեան սկըզբանց լիուլի յաղթանակը կը յուսացնէ :

— 6. — Ի Պեռլին լրագրաց հարկէ աղատ ըլլալը կ'ընդունուի :

— 7. — Ունգարացիներքին պաշտօնակալը Դոթ ներքին Պաշտօնագիրը (Portafoglio) կը թողու . որուն կը յաջորդէ կոմսն Սաբարի :

— 8. — Ֆիկուէրաս հաշտավարութեան ոճ բռնել կը վարդապետէ աղատասիրաց , հրաւիրելով զամենայն կարգասէրս վստահ ըլլալ հասարակավետութեան վրայ , որ մեծաձայն կ'ողջունուի :

— 9. — Գահաժառանգ մեծ դուքսն պատուաւոր նախագահ կ'ընտրուի Ռուսիոյ մասին Վիէննայի արուեստահանդիսին համար :

— 10. — Ի Մատրիտ խոռվասիրաց հաւանընկեր (federale) կեդրոնախումբ մը կը կազմուի : — Ի Պարչէլլոնա հասարակավետութիւն կը հրատարակուի : — Պիզմարք Աւագաց Ատենին մէջ (Camera dei Signori) ընդդէմ քահանայապետին Հռովմայ ճառախօսութիւն մը կ'ընէ :

— 11. — Լէուոքովսքի արքեպիսկոպոսը դատաստանական քննութեան տակ կը ճգուի փետրուար 23ի շրջաբնրականին համար :

— 12. — Հասարակաց Ատենին մէջ (Camera dei Comuni) 287 քուէով ընդդէմ 284ի կը մերժուի ՚ի վարչութենէ իուլանտայի համալսարանին . համար առաջարկեալ օրինաց նիւթը : — Ի Պեռլին Ատենը կը բացուի կայսերական ճառախօսութեամբ :

— 13. — Ռուսիոյ կայսրուհին Բիէդրոպլուրկէն դէսլ՝ ՚ի իտալիա ճամբայ կ'ելլէ :

— 14. — Թիէր ազնիւ նամակով մը ներումն կը խնդրէ Նիկրայէն ըստ հրամանի բժշկաց իտալիոյ թագաւորին ՚ի պատիւ կատարուած հանդիսին գաղ ներկայ գըտնուիլ չկարենալուն համար : — Վիկորիա թագուհին դժիգրաէլի կը կանչէ : — Կ'արգելուի Ճողովարան աղջային գաղղիարէն լրագիրը Պիզմարքի դէմ գրած նախատալից յօդուածներուն համար :

— 15. — Քասդէլար կը ծանուցանէ խորհրդարանին թէ Տոն Քարլոս ոչ է ՚ի Սպանիա : — Մեծ շփոթութիւն ու կոիւ ՚ի Բեթլեհէմ Յունաց և Լատինաց մէջ : — Ի Պեռլին հինգերորդ միլիարին վճարման և գաղղ. երկրէն գերմանական դօրաց ելլերուն դաշնադրութիւնը կը կնքուի :

ԲԱՐԻԶՈՒ ՕԲԵՐՈ ՆՈՐ ԹԷԱՏՐՈՆԸ

Բարիզու Օբերո անուն թէատրոնը մինչեւ այս վերջի ժամանակներս թափառական ժողովրդեան մը կը նմանէր , աստ անդ գաղթելով ըստ փոփոխելոյ պարագայից : Յերեան ելաւ առաջին անգամ յամին 1671, Մազարէն ըստած փողոցին մէջ եղած օդապարկի խաղուց համար սահմանեալ բացավայրին վրայ . բայց չկրնալով հոն հաստատուն մնալ , այլ և այլ տեղեր փոխուեցաւ . և այս փոփոխութեանց ժամանակ երկու անգամ ալ կրակի զոհ եղաւ :

Բայց վերջ մը ուղելով տալ այս թէատրոնին թափառական կենացը , ձեռք զարկին հաստատուն և վայելու շէնք մը շինելու Ռուսան և Լաֆայէդ փողոց մէջ : Եւ ահա մեր առաջիկայ պատկերը կը ներկայացնէ նոյն շէնքին արտաքին տեսքը , որ շինուած է ըստ ոճոյ բիւզանդեան ճարտարապետութեան և հետեղութեամբ իտալական վերածնութեան դարու ճարտարապետութեան : Եւ ինչպէս ընթերցողը կը տեսնէ , շէնքին ճակատը խումբ խումբ արձաններով զարդարուած է , և ամբողջութիւնը բժանկիւն զուգահեռագիծ մը կը ձևացնէ : կողմնակի կամարակապ սրահից միջոցաւ շէնքին ամբողջ ներքին շրջապատը կրնայ պըտըտուիլ :

Արևմտեան կողմը՝ որ կը նայի Ռուսան փողոցին վրայ , դուրս ցցուած վրանածե շինուած մը կայ , որուն շինութիւնը սկսաւ յամին 1865 . և պիտի ծառայէր մասնաւորապէս նոյն ատենուան կայսերական ընտանեաց . հիմա որ աւարտեցաւ շէնքը՝ չեմք գիտեր թէ որ ալքունական ընտանիքը նախ պիտի սկըսի անոր վայելքը :

Թէատրոնին չորս կողմը գրեթէ 2774 մեդր տեղ պարտէզներ , ծառեր և զրոսանաց տեղեր կան :